Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

3 ապրիլի 2014 թվականի N 13

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ՆԻՍՏԻ N 24 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացման ծրագրին հավանություն տալու մասին» N 24 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացման ծրագրում (այսուհետ ծրագիր) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) ծրագրի 1-ին կետի՝

ա. 8-րդ պարբերությունից հանել «պասիվ վերահաղորդման կետեր» բառերը,

բ. 9-րդ և 10-րդ պարբերությունները հանել,

գ. 11-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անալոգային հեռարձակման դադարեցման նախատեսվող վերջնաժամկետը 2015 թվականի հուլիսի 10-ն է: Անալոգային և թվային համատեղ հեռարձակման ժամկետը հաշվարկվել է թվային և անալոգային հեռարձակման ընդգրկման գոտիների նույնականացման, թվային ընդունիչ սարքերով բնակչության առնվազն 95 % ապահովվածության և համատեղ հեռարձակման առնվազն 6 ամիս տևողության ապահովման պայմաններով:».

2) ծրագրի 2-րդ կետի 5-րդ պարբերությունում «թվային ռադիոռելեային գծերի ցանց» բառերը փոխարինել «օպտիկա-մանրաթելային գծերի ցանց» բառերով.

3) ծրագրի 2.1-ին կետի՝

ա. «Ընդհանուր դրույթներ» բաժնում «թվային միկրոալիքային ռադիոգծերի» բառերը փոխարինել «օպտիկա-մանրաթելային գծերի» բառերով,

բ. «Main Head End Yeravan» սխեմայի մեջ «SDH» բառը փոխարինել «FO» բառով,

գ. «Տեխնիկական պահանջները» բաժնի 4-րդ պարբերությունից հանել «անխափան սնուցման աղբյուրներ (UPS)» բառերը, իսկ նույն պարբերությունում «թվային ռադիոռելեային գծերի ցանցի» բառերը փոխարինել «օպտիկա-մանրաթելային կապի ցանցի վերջնակետային սարքավորումների» բառերով,

դ. «Տեխնիկական պահանջները» բաժնի 6-րդ պարբերությունից հանել «Հանգույցներում պետք է նախատեսել անխափան սնուցման աղբյուրներ (UPS)» բառերը,

ե. «Աշխատանքների ցանկ» բաժնի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարզային մյուս հանգույցներում կապալառուի հսկողությամբ և վերջնական արդյունքի համար պատասխանատվությամբ, մոնտաժային և համալարման աշխատանքներն իրականացնում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունը:».

4) ծրագրի 2.2-րդ կետի՝

ա. 3-րդ պարբերությունից հանել «նախատեսել 3 հզոր (30 կՎտ) UPS-ներ» բառերը,

բ. 5-րդ պարբերությունից հանել «ԵՐՀՌՀԿ-ի և թվով 7 մարզային ցանցերի համար» և «Նույն քանակությամբ նախատեսել նաև» բառերը,

գ. 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նախատեսել մեկական հաղորդակի ամբողջական մոնտաժ և համալարում Երևանում և Գյումրիում: Մնացած կայաններում կապալառուի հսկողությամբ և վերջնա-

կան արդյունքի համար պատասխանատվությամբ՝ մոնտաժային և համալարման աշխատանքներն իրականացնում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունը:».

5) ծրագրի 2.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3. Հեռահաղորդման օպտիկա-մանրաթելային գծերի ցանց

Օպտիկա-մանրաթելային համակարգը նախատեսվում է 64 կայանների միջև թվային հեռուստատեսային ազդանշանների հեռահաղորդումն ապահովելու համար:

Կայաններից 10-ը լինելու են թվային մուլտիպլեքսների ձևավորման կետեր: Դրանք են Երևանի գլխակայանը (Head End) և Գյումրու, Վանաձորի, Իջևանի, Գավառի, Աբովյանի (Պտղնի), Էջմիածնի, Արտաշատի, Եղեգնաձորի, Կապանի մարզային մուլտիպլեքս կայանները: Անհրաժեշտության դեպքում օպտիկա-մանրաթելային ցանցը պետք է հնարավորություն ընձեռի վերահաստատելու նշված 10 կետերի տեղակայումը՝ 64 կայանների սահմաններում:

Նշված կայանները կապակցող ցանցը լինելու է հիմնական և պետք է բավարարի հետևյալ պայմանները՝

ընդհանուր թողունակությունը՝ 10 ԳԲ,

հուսալիությունը՝ 99.99 %,

կետերի միացումը՝ յուրաքանչյուրը 1 ԳԲ թողունակությամբ երկու ինտերֆեյսով, «ամենքը ամենքի հետ» սկզբունքով: Անհրաժեշտության դեպքում պետք է հնարավորություն ընձեռվի միացման ինտերֆեյսը փոխարինելու 10 ԳԲ-ով:

Մնացած 54 կայանները կապակցող ցանցերը լինելու են տարածաշրջանային և կրկնակի ֆիզիկական ռեդուրենտ գծերով ու ցանցային «աստղաձև» կամ «օղակաձև» լուծումներով պետք է միացվեն տվյալ մարզային մուլտիպլեքս կայանին՝ համաձայն

ստորև ներկայացված ցանկի: Տարածաշրջանային ցանցերը պետք է բավարարեն հետևյալ պայմանները՝

ընդհանուր թողունակությունը՝ 1 ԳԲ յուրաքանչյուր տարածաշրջանային ցանցում, անհրաժեշտության դեպքում՝ մինչև 10 ԳԲ ավելացման հնարավորությամբ,

հուսալիությունը՝ 99.8 %,

կետերի միացումը՝ յուրաքանչյուրը 1 ԳԲ թողունակությամբ երկու ինտերֆեյսով:

Անհրաժեշտության դեպքում պետք է հնարավորություն ընձեռի ինտերֆեյսը փոխարինելու 10 ԳԲ-ով:

Հիմնական ցանց	Տարածաշրջանային ցանցեր
1	2
1. Երևան	1. Ապարան 2. Գեղաձոր 3. Արեգ 4. Աշտարակ
2. Գյումրի	5. Ամասիա 6. Սարատակ
3. Աբովյան (Պտղնի)	7. Չարենցավան 8. Հրազդան 9. Ծաղկաձոր 10. Մեղրաձոր
4. Գավառ	11. Մարտունի 12. Վարդենիս 13. Ճամբարակ 14. Սևանի լեռնանցք 15. Սևան
5. Իջևան	16. Բերդ 17. Դիլիջան-1 18. Սևքար 19. Նոյեմբերյան 20. Այրում

1	2
	21. Դիլիջան-2 22. Բլդանչայ 23. Վասիլև 24. Չինչին
6. Արտաշատ	25. Վեդի 26. Արմաշ 27. Ջովաշեն
7. Էջմիածին	- -
8. Եղեգնաձոր	28. Ջերմուկ 29. Վայք 30. Թերփ
9. Կապան-1	31. Կապան-2 32. Սիսիան 33. Գորայք 34. Եղվարդ 35. Քաջարան 36. Վարդանիձոր 37. Ագարակ 38. Գորիս 39. Կատարի 40. Մեղրի 41. Խնածախ 42. Շիկահող 43. Ծավ
10. Վանաձոր	44. Պուշկինի լեռնանցք 45. Ստեփանավան 46. Չկալով 47. Օձուն 48. Սանահին 49. Ախթալա 50. Սարալանջ 51. Սպիտակ

1	2
	52. Նորաշեն 53. Շնող 54. Թեղուտ

Հիմնական և տարածաշրջանային ցանցերը պետք է ապահովեն հեռահաղորդվող թվային հեռուստատեսային ազդանշանների IP հոսքերի տեղափոխման բավարար պայմաններ (Packet Loss, Delay, Jitter):

Հիմնական և տարածաշրջանային ցանցերի ընդհանուր կառուցվածքը պետք է հնարավորություն ընձեռի լոկալ վերահսկման և կառավարման համակարգի միջոցով իրականացնելու թվային հեռուստատեսային հոսքերի համապատասխան կարգավարումներ և երթուղումներ (маршрутизация)՝ առանց ծառայություն մատուցողի միջամտության:

Հիմնական և տարածաշրջանային ցանցերի բոլոր կետերը պետք է ապահովված լինեն ֆիզիկական ռեդուրենտ «տաք պահուստով»:

Ծառայություն մատուցողի և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության պարտավորությունները սահմանազատվելու են ցանցի և վերջնակետային սարքավորումների համակցման կետերում.

6) ծրագրի 2.4-րդ կետի «Ընդհանուր դրույթներ» բաժնի՝

ա. 1-ին պարբերությունում «թվային ռադիոռելեային գծերի (ԹՌՌԳ)» բառերը փոխարինել «օպտիկա-մանրաթելային կապի» բառերով,

բ. 2-րդ պարբերությունից հանել «4.6 մ (Andrew)», «թվով 200» բառերը, իսկ նույն պարբերությունում «ԹՌՌԳ-ի հնարավոր խափանումների դեպքում» բառերը փոխարինել «օպտիկա-մանրաթելային կապի ցանցին» բառերով.

7) ծրագրի 2.4-րդ կետի «Տեխնիկական պահանջները» բաժնում՝

ա. 3-րդ պարբերությունում «30 Մս/վրկ» բառերը փոխարինել «30 Մսիմվոլ/վրկ» բառերով,

բ. 5-րդ պարբերությունից հանել «Հիմնական և պահուստային լրակազմերի միջև անցումը նախատեսել ալիքատարային փոխանջատիչներով» բառերը,

գ. հանել 6-րդ պարբերությունը,

դ. 7-րդ պարբերությունից հանել «Թվով 200» և «(ենթակա է ճշգրտման արբանյակի ընտրության ժամանակ)» բառերը.

8) հանել ծրագրի 4-րդ կետը:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին և առաջարկել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին ապահովել սույն արձանագրային որոշումից բխող գործողությունների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2014 թ. ապրիլի 11
Երևան